

# ՕՐԸ ԿԻՒՐԱԿԻ Է՝ ԵՐԱՋԸ ՍՈՒՏ

## ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏԿԵՐ

(Շար. եւ վերջ)

Նշանադրութիւնն երկար չը տեւեց :

Տէր-Կիրակոսը հարսնացուի կողմը բռնեց , Աղալօյին տուեց , միւս սեղանակն ուղարկեց , իսկ երկու նոր խնամօրէններն — Դէղա Մաթօյին ու Դալալ-Մինասին գինու բաժակը ձեռքներին՝ ուրախ տրամադրութեան մէջ թողած՝ ինքը նրանց բարի գիշեր մաղթեց , դուրս ելաւ՝ անելիք պատկը պատճառ բերելով :

— Ի՞նչ գլխի տրա՛քոցը՝ թէ՛ դու պսակ անելու ես գնում , իրիցի ետեւից ձեռքը օդումը ճօճեց Դէղա-Մաթօն , տեսնիս՝ ո՞ր բաղնիսումը , կամ միկիտանխանումն (գրնետուն) է խօսք տուել ղուժարբաղութիւն անելու :

— Կամ թէ՛ չէ՛ , շատ գիշերներով կըլողու հարսների մօտ չի ընկած մնո՛ւմ , պոճոկուի՛ դրա միրուքը , ձայնակցեց նոր խնամուն Դալալ-Մինասը :

Միւս օրն Աղալօ Շաքարովն երկու հարիւր բուբու մի մուրհակ նօտարի ձեռքով վաւերացրած , մի տարէն ժամանակամիջոցով տիրացու Մարտիրոսի անունին գրած , բերեց եւ տուեց տէրատէրին : Ստորագրուած էին Աղալօ եւ Մաթօ Շաքարովները՝ վերջինիս պատկանած տունն էլ գրաւական էր նշանակուած :

Տէր-Կիրակոսը մուրհակը ուշադրութեամբ կարդալուց յետոյ՝ բացեց իր գրասեղանի արկղը , զետեղեց մէջը՝ խնամքով մի ծալք նոյնպիսի մուրհակների կեա եւ հանելով դարակից մի թղթագրամների կապ , տուեց Աղալօյին ու արկղը փակեց , բանալին դրեց ծոցը :

— Սխալուել ես , տէր հա՛յր , աիրացուից պակաս ես ստացել , էստեղ 15 թուման է (1) , փողերը թերթելով յայտնեց Աղալօն :

— Չեմ սխալուել , որդի՛ , 200ից 24 մանէթը տոկոսն է , որ աիրացուն էս գլխից վերցրեց . ախար ես քեզ հօ՛ ուրիշի ոտովը չի պիտի տանիմ . տիրացուն 30 բուբուի էր ուզում հանել տոկոս , բայց ես բե-

(1) Թիֆլիսի թումանը տասն բուբուի է . ժողովուրդը մինչեւ այսօր թումանով է իր հաշիւն անում :

բանին մի ապտակ տուի ու վեց բուբլին պակասացրի : մնաց 26 բուբլի , էն էլ կուզես ինձ մօցիքուլավարձ (միջխմարդութեան վարձ) հաշուելը , կուզես պակասդրամ ընդունիր , քո խաթրն է , թէ չէ 30) բուբլուց հատ կոպէկ պակաս չեմ անիլ :

— Եթէ էդպէս է , աջիդ մեռնի՛ մ , իմ բարաթն ինձ յետ դարձրո՛ւ , ախրացուի փողը ասար իբան տո՛ւր , Դալալ-Մինասին էլ գնա յայտնի՛ր , թող իր համար ուրիշ փեսայու ճարէ , դու սկզբու մն ինձ մուգաթի (տոկոս) խօսք չարիք , մօցիքուլահախ տալու էլ հատ կապէկ շուներիմ , իսկ երբ որ կը պսակես , մեր տէրտէրն ես , ձեռքներիցս ինչքան կը գայ՝ չենք խնայիլ , փողը սեղանի վրայ ցած գրեց Աղալօն :

— Լսի՛ր , անպիտան , աչքերից կրակ ցայտելով գոչեց տէր-կիւրակոսը , ում մինչև էս օր խաբել ես , գնա կրկին նրանց խաբի՛ր , իսկո՛յն քեզ աշխարհի մէջ կը խայտառակեմ , մարդի աղջկանը համբուրել ես , անուն ես արել , գիշերը մինչև լոյս մօտը կացել ես , հիմի ուզում ես յետ կանգնիլ : Էնպէս կանեմ , որ շինած ոտ ու գլուխդ ոչ մի մարդ չի գնիլ , շներին կը թափես . դու քանի՞ դիխանի ես , որ ուրիշի աղջկայ գլուխը դուրս ես կտրում :

Եւ տէրտէրը շտապելով վերցրեց սեղանի վրայից թղթադրամի ծալքը , նորից փակեց գրասեղանի մէջ ու բանալին ծոցում պահելով՝ գոռաց .

— Հիմա գնա՛ որտեղ կուզես , դանդատուի՛ր :

— Բարաթս յետ տուր , որ գնամ է՛ :

— Ընչո՞ւ պէտք է տամ , ո՞վ է քո վկան , որ փողերը չես ստացել , սպառնաց քահանան :

— Մեղա՛յ Ասածու , տէր հա՛յր , ների՛ , կուչ եկաւ Աղալօն :

— Հա՛ , հա՛ , հա՛ , կզկչալով ծիծաղեց տէրտէրը , լաւ շո՛ւտ վախեցար , արի՛ , արի՛ , անառակ որդի՛ս , եւ դու կարծում էիր , թէ ես քո փողերը կուրանամ , առ հոգեզաւակս , առ գնա հարսանիքիդ պատրաստութիւնը տես . միամիտ կա՛ց , ես քեզ վնաս չեմ տալ , դու իմ սիրեկան ծխերից մէկն ես , ինչպէս խոստացայ , օրական որքան ոյժդ կը պատի , ձեռքդ եկած փողերից բեր . տարին որ լրացաւ , մուրհակդ կը պատենք , կը վերջանայ . ի՞նչ տիրացու , ի՞նչ տէրտէրացու , փողն էս արկղիցը դուրս եկաւ , պարտամուրհակն էլ էստեղ պիտի քնի . ախրացուն որ փող ունենար , տարին 12 ամիս շուրջառս ուսին շանս նման քամակիցս թեւ կը դա՞ր . հը՛ , հը՛ , հը՛ , միամիտ դա՛ոս , կրկին ծիծաղեց երէցը :

Աղալօն խոր յուրոց հանեց , ստացաւ 150 բուբլին տէրտէրի աջը համբուրեց ու դուրս գնաց :

— Լսի՛ր , ձայն տուեց Աղալօյի ետեւից տէրտէրը , չը մոռանաս՝ ամիսն երեք անգամ մեզ համար դէք եւ արու ոչխարի ոտ ու գլուխ

շատ մաքուր պատրաստել եւ բերել , թափան ու աղիքներ էլ թող լինի, ես խաչ շատ եմ սիրում. մէկ մէկ էլ՝ տաւարի խաչ մաքրի ու բեր , Մտիկ տո՛ւր , լսի նման խտակ շինես , մի հատ մազ չը մնա՛յ վրան , թէ չէ յաւիտենական պարտքից չես ազատուի :

— Աչքի՛ս վրայ , պարաքս է , գլուխ իջեցրեց Աղալօն եւ երբ բռնորովին հեռացաւ գոչեց գլխին զարկելով .

— Ախմախ իմ գլո՛ւխ , մէջդ ուղեղ չէ , դարմա՛ն է , դարմա՛ն , էն էլ փթած դարման :

Աղալօյի գործե՛րը յաջող են : Նորահարսի ոտքը բարի էր , ինքն էլ աշխատասէր ու տնարար աղջիկ էր . սկեսրոջ հետ միասին օրական մի քանի խաչ մաքրում են : Եւ որովհետեւ նրանք շատ շուայլ չէին , չափաւոր ապրուստից Աղալօն կարողանում էր քիչ քիչ փող յետ պահել :

Ամէն երեկոյ աւելորդ մնացած փողերն Աղալօն տանում յանձնու՛մ էր տէր-Կիրակոսին եւ ապահով էր , որ իւր սանու քահանան ստացածնե՛րն իր «Յայսմաւուրում» կպցնու՛մ է , ինչպէս իր մեռոնած բերանով ամէն անգամին կրկնում էր :

Աստուած Աղալօյին տարուայ գլխին մի աղջիկ զաւակ պարգեւեց , Տիրացու Մարտիրոսը կնքահայրն էր , մկրտողը տէր-Կիրակոսը , Երկրորդ տարին երկրորդ աղջիկն ունեցաւ Աղալօն , Տիրացու Մարտիրոսը կնքահայրն էր , մկրտողը տէր-Կիրակոսը :

Երրորդ տարին աղջիկներն երեքացան :

Վերջին աղջկայ ոտքը բարի չէր ոչ իր , եւ ոչ մօր համար : Մընդհանը երեխին աշխարհ բերելուց երեք սհաթ յետոյ՝ ինքն էլ փչացաւ , նորամանուկին էլ հետը տարաւ :

— Հէնց է՛ս ցաւն էր , որ չէի ուզում բալուկիս անաւորելը , քունջ ու պուճախում գլխին աալիս էր ու մղկտում Դէղա Մաթօն եւ աւելացնում . խեղճ երեխիս երեք տարի յառաջ կիրակի օրուայ տեսած երազն էս օր կատարուեց : Ես շատ էի փորձել , որ Երազագիրքը ուղիղ չի ստում , թէ «կիրակի օրուան տեսած երազը սուտ է» . ուրիշների համար կիրակի գիշերուայ երազ հարիւրներով մեկնել եմ ու յորձն էլ կատարուել են : Ես հաստատ գիտէի , որ Աղալօյիս տեսածն է՛լ պիտի կատարուի , բայց բալուկիցս թագցրի , չուզեցայ սիրտը կտորել : Ես իմանում էի , որ արծիււր մի օր մեր աչքը հանելու էր : Տեսա՞ք ո՞նց հանեց , հարսիս ու թոռանս երեք սհաթուան մեղին բերեց (մահացրեց) :

— Աղիդ մատա՛ղ , տէրտէր ջա՛ն , չը նեղանաս , որ խեղճ կորածիս թաղմելէքը չունէի ու էսքան ժամանակ ուշացրի , հիմի բերել եմ , շատ է՛ շատ համարի , քիչ է՛ շատ համարի , մի երեկոյ լալով ներս եկաւ Աղալօն տէրտէրի մօտ :

— Ես թէպէտ քեզ սիրելով ոչինչ չէի ստում . Աղալօ Զա՛ն , պատասխանեց տէր-Կիրակոսը : բայց քո պարտաքէ էր , որ կնոջդ հողին պարտական չը թողնէիր :

— Չըկար , տէր հա՛յր , ի՞նչ անէի , ո՞ր Զուրն ընկնէի :

— Քեզանից ո՞վ էր հիմի փող ուզում , որդի՛ . մի երկու տող մուրհակ գրել կը տայիր մեր տիրացուի անունով , կը բերէիր , թող ընկած մնար , երբ կունենայիր՝ կը վճարէիր . բայց ոչինչ , տո՛ւր , տեսնենք՝ կնոջդ որքա՞ն ես սիրած եղել . սուած թաղմելիքիցդ կերեւայ :

— Ասածուն էլ յայտնի է , որ իմ գլխից աւելի էի սիրում լուսահոգուն , բայց նրա հողին վկա՛յ . որ չըկայ , էս հինգ մանէթն էլ , Աստուած չէ՛ն պահի աղայ Բախշիովի օջաղը , օխաը խաչի մուննաթ եմ արել քս առել , բերել :

— Խղճմտանքիցդ վախեցիր , Աղալօ՛ , հանդուցեալ Փէփէլը իր գլուխը մահի էր տայիս քեզ համար , հիմի նրա լաւութիւնը դու հինգ մաննէթօ՞վ ես վճարում . էսքան փողով նրան դրախտի զոնապանը չի էլ թողալ , որ դրախտի պատի սակոյն անց կենայ :

— Որ չըկայ , ի՞նչ անեմ , աջիգ մեռնի՛մ :

— Ասացի՛ որ էսօր ոչինչ մի՛ տալ , բայց վնաս չունի , հինգ մանէթ բերել ես , տուր , բէհի պէս (սոհաւառչեայ) մնայ , մնացածի համար մի կտոր թուղթ գրել սուր , բեր . կունենաս՝ կը վճարես , չես ունենալ՝ մի տեսակ կը վերջացնենք :

— Ինչքա՞ն կը հրամայես գրիլ տամ , տէրտէր Զա՛ն :

— Ուրիշներից՝ 50 բուբուց պակաս չէի անիլ , բայց դու մերն ես , 25 բուբի գրել սուր եւ ինչքան էլ հանդուցեալին հագուստ ունի , բոխչայ ունի , գլխի փաթաթաններ , ոսկիղէն , արծաթեղէն զարդեր ունի , մի խօսքով իր ամբողջ կողոպուտը տանդ մի՛ պահիլ , հաւաքի , բեր մեր տունը , որը մենք պէտք կածենք , նրա հոգու համար «Հոգուց» կասենք , որն էլ աղքատներին կը բաշխենք : Նրանց աղօթքն էլ Աստուած կը յսի : Եւ որովհետեւ , ինձ յայտնի է , որ դու կարողութիւն չունիս մեռելից համար եօթը պատարագ անել տալ , ես քեզ խօսք եմ տալի եօթր կիրակէ պատարագի մէջ յիշել նորոգ հանդուցեալ Փէփէլին :

Աղալօն ուրախ եղաւ . որ իր հողին կնոջ հոգուն պարտական չը մնաց , Նա տէրտէրի հրամանը , համարեա , բառադի կերպով անթերի կատարեց , Դեռ աւելին արեց :

— Ա՛յ որդի , Աղալօ՛ , ընչո՞ւ պարտականութիւնդ մոռացել ես , մի օր՝ Աղալօյի կնոջ մահից երկու երեք ամիս անց՝ յանդիմանեց նրան տէր-Կիրակոսը , լուսահոգի Փէփէլի կենդանի ժամանակ մէկ մէկ մեզ համար խաչ բերում էիր , իսկ հիմի ոչ ոտ ու գլուխ ես մեզ ընծայ բե-

բուժմ, ոչ մի կոպէկ պարտքերիցդ ես զերզուում: Ես որ պատիւդ պահում,  
լռում եմ, դու պիտի գլուխդ իսպառ մոռանա՞ս:

— Աջիդ զուրբան, տէրտէր ջա՛ն, էնքան չի դալիս, որ երև-  
խէքանց համար կաթի գլին անենք ես ու մէրս, հաւատա՛, շարթի  
երկու օրը քաղցած ենք մնում: Խեղճ պտուան երեխէքանց ձեռքից ժա-  
մանակ չունի, որ օրական մի ոչխար մաքրի: Եթէ ես իրան հետ գի-  
շերները քուն չը կտրենք ու չաչխատենք, հացի փող չենք ճարիլ...

— Պարտքի տէրն ի՞նչ կը հարցնի, բարկացաւ քահանան, Աղա-  
լօյի բացատրութիւններն ընդհատելով:

— Բայց մի՞թէ էս երեք տարուժը քիչ յիշ տալով՝ չը վերջացրի:  
Իմ հաշուով շատ չի մնում: Երկու տարի իրար վրայ գալիս խնդրում էի,  
որ տուածներս հաշուէիր, տեսնէինք ի՞նչքան էր մնում, դու միշտ ինձ  
ապահովացնում էիր, թէ գնա՛, անհող կա՛ց, երբ որ կը վերջանայ,  
քեզ իմաց կըտամ ու բարթով քեզ կը յանձնեմ, հիմի էլ կանդնել ես,  
թէ ոչինչ չես բերում: Խնդրեմ, թուղթը հանես, ստացածներդ կար-  
դաս, իմանանք մեր տալիք, առնելիքը:

— Յիմար ե՞ս, թէ ուրիշին ես ուղում յիմարացնել, անասո՛թ,  
էդ էլ իմ լաւութիւնն է՞, օրական աղքատի գանձանակը քցածդ մի քա-  
նի կոպէկը որ միտդ է քալիս, հապա իմ փողի տոկոսին տոկոս չըկա՞յ,  
մեր փողն աղբանոցո՞ւմն ենք գտել:

— Բայց, տէր հա՛յր, այս երեք տարուժն իմ գործս յաջող էր,  
լսի բաժին նշանածս օգնում էր եւ կարողանում էի էնքան բերել, որ  
եթէ շահի շահ էլ հաշուես, էլի պարտքերիդ գլուխն էլ վերջացած կը  
լինի, մի բան էլ իմը քօ վրայ կաւելանայ, որ ի հարկէ քեզ անո՛ւշ,  
չեմ ուզում, մեր տէրտէրն ես:

— Իսկ երեխաներիդ մկրտութեան վարձը, իսկ կնոջդ խաղմէլէ-  
քը, ձրի ոտքեր ունէ՞ի՞ քեզ համար մինչեւ Խօջի վանքը (1) կոտորելու:

— Ախար չէ՞ թաղմիւէքի համար ջոկ թուղթ ես առել, ու լսում  
է, սարսափում է, իմ պէս մարդն, ասում են, հինգ մանէթից աւել  
իբ մեռլի թաղելու փող չի տալիս, ես հօ 25 մանէթ եմ առել, նրա  
կէտն էլ, թէ կուզես, երեխէքանցս կնքադրամ հաշիւ արա, վախ-  
վախելով ծործրակը քերեց Աղալօն:

— Դո՛ւս, անպիտան, ապերախա չուն, ճչաց տէր-կիրակոսը եւ  
Աղալօյի թեւիցը քաշեց, տանից դուրս վոնդեց ու դուռը ետեւից պինդ  
փակեց:

Խեղճ տղան մնաց դրան ետեւը մոլորուած: Վերջը նա դիմեց տէր-  
Առաքելի օգնութեանը:

— Աչքիս վրայ, որդի՛, հէնց այս բոպէիս կը գնամ տէր-կիրա-  
կոսին խնդրելու, բայց դժուար, թէ շատ բան կարողանամ յաջողե-  
ցնել, «խաչն իմն է, զօրութիւնը ես գրտեմ», սիրա տուեց տէր-Առաքելը:

(1) Խօջի վանք կոչուում է Թիֆլիսի Հայոց վերկզմանատունը:

— Կը ներես , սիրելի Աղալօ՛ , տասց միտ օրը աէր Առաքելը , ձեռքիցս ոչինչ չեկաւ , մինչեւ անգամ իմ ծխերիցս հինգ լաւ տուն իրան թողնել խոստացայ , բայց քարասիրտը քարացաւ եւ ինձ լաւ անպաւ տուեց . « անշնորհք , գուն չը կապած մողի , քնած մոլորուած » անուունեց ու ճանապարհ գրեց : Անպատու թիւնը ոչինչ , թող աասն այնքան պակաս խօսքեր ասէր , միայն թէ խնդիրս կատարէր :

Երկու տարի էր Գէղտ-Մաթօն երազ չէր մեկնում . նրան այժմ մի երկու հարեւան պառաւներից աւել ոչ ոք ոչ անհնում է եւ ոչ ճանաչում եւ ինքն էլ այդ մասին շատ չի մտածում :

Այս ի՞նչպէս եղաւ , հարցնում ես անշուշտ , ընթերցո՛ղ :

— Շատ պարզ : Այժմ Աղալօն իւր մօր եւ որբերի հետ այլ եւս Քարափի թաղումը չէ բնակուում , նա այլ եւս սեպակահան տուն չունի : Նրա մայրենական խրճիթն այժմ պատկանում է աէր-Կիրակոսին :

— Տէր հա՛յր , տանից զրկուելուց մի քանի ամիս յետոյ լալով ներկայացաւ Աղալօն աէր-Կիրակոսին , մօրս բաժինքում բերած տունն 200 մանէթիդ փոխարէն վերցրիր , քեզ հալա՛յ , ընչի՞ համար ես ուղում մօտդ պահել կնոջս թաղմուիքի համար սուածս 25 մանէթի թուղթը :

— Էն ուրիշ պարտք է , սիրելի Աղալօ՛ , նա տան մուրհակի հետ կապ չունի :

— Բայց ես ո՞րտեղից պիտի վճարեմ , քանի որ ցամաք հացի փող հաղիւ եմ ճարում :

— Հոգ չէ , որդի՛ , աէրաէրից սիրտը լայն է , փողով չես կարող վճարել , մշակութիւնով կը լրացնես . Օրթաճալումը (1) մեր բազի ջուր բարձրացնելու շարխր (անիւ) փթեւ է , նորն ենք շինում , բայց Գուռը (Կուր գետ) հեռացել է , արիս (առու) ենք հանում ջուրը մեր կողմը դարձնելու համար , օրական 20 մշակ բռնում է , գուռ էլ մի երկու շաբաթ կը դաս , արխի վրայ կը բանես , պարտքդ կը վերջացնես :

Շատ խնդրեց , աղաչեց Աղալօն աէր-Կիրակոսին ազատ կացուցանել իրան , պատճառելով թէ իւր մի օրուան բացակայութիւնը քաղցածութեան մէջ կը մահացնէ իւր փոքրիկներին ու մօրը , չեղաւ , չը կարաց փափկացնել անողորմ հոգեւորականի ապառաժ եւ վայրագ սիրտը :

Մի այնպիսի խօսք ասաց քահանան , որ Աղալօն պատրաստ էր երկու ձեռքի փոխարէն երկուան էլ փոխ տոնել եւ զնալ Օրթաճալումը իրիցի այգու առուի վրայ աշխատելու :

(1) Օրթաճալան Թիֆլիսից ներքեւ Կուր գետից կաղմուած կղզի է , ուր Թիֆլիսի այգիներն են եւ ոսոցուում են գետից արհեստական կերպով բարձրացրած ջրով :

— Չե՞ս ուզում երկու երեք շաբաթ իմ առուի վրայ գործելու սպառնաց տէրտէրը , կերթամ , որքան օրհնանք եմ կարգացել ննջեցեալիդ գլխին , երկու այնքան անէծք կը կարգամ , սատանէքը կնոջդ ոտքերից քարշ տալով՝ կը ձգեն դժոխքի անհանգչելի կրակի մէջ :

Պարզամիտ Աղալօն լալով գնաց մօրը պատուեց եւ երկուսն էլ հաւատացին :

— Գնա , բալո՛ւկս , գնա աշխատի՛ր , համոզեց մայրը , թող մեր մեռելը սատանաների ճանգերից ազատուի , իսկ ես տանջուելով՝ ինչպէս լինի , օրական մի ոչխարի ոտ ու գլուխ կը մաքրեմ , կը տանեմ քո մշտական մուշտարիներին աղաչանք կանեմ վերցնեն ու նրանով մի քանի դոջ տուն կը բերեմ , երեսխաներին կը պահեմ :

— Եթէ մինչեւ առուն վերջանալն ամէն օր ինձ համար գործես ու չարխը կանգնացնելուն էլ օգնես , խոստացաւ տէր-Կիրակոսը , ջուրը որ հանեցինք՝ միւս օրը քեզ հետ միասին կերթանք գերեզմանատուն , քո ներկայութեամբը կնոջդ գերեզմանը կօրհնեմ եւ մուրհակիդ գլուխն իմ ձեռքով կը պատահեմ , կը գնեմ գերեզմանի վրայ , ինքդ վերցրո՛ւ ոչնչացրո՛ւ :

— Աստուած փառոց պահի՛ , տէրտէր ջա՛ն , վնաս չունի , մենք մի ամիս քաղցած կը մնանք , թող իմ ջրատար հարսի հոգին ազատուի կարէ կարասից (դժոխքից) , քահանայի աջն առաւ Դէգա Մաթօն եւ որդուն ուղարկեց տէր-Կիրակոսի այդուժ բանեւու :



— Շաախն համբերել ես , մի երեք օր էլ համբերի՛ , դէգի ջա՛ն , մի երեկոյ Օրթաճալից եկաւ եւ ուղեցաւ մօրն ու բախացնել Աղալօն . էգուց կիրակի է , կը դնջանանք , երկուշաբաթի արխը կը վերջացրնենք , երեքշաբթի օրը չարխը կը կանգնացնենք ու չորեքշաբթի տէրտէրը խոստացաւ , որ քեզ հետ կերթանք լուս կտրած Փէփէլի գերեզմանը կօրհնենք :

— Դէգիդ մեռնի՛ , բալուկս , էն էս մի ամիսն էնքան տանջուցիր , որ վրէժ միս չըմաց , ոսկրներդ դուրս են թափել . քնի , հանգստացի , որ երկուշաբթի օրուայ համար ջանքերդ ոյժ մնայ :

Դէգա Մաթօն պարզ ընթրիքից յետոյ պառկացրեց Աղալօյին եւ գլխավերեւը կանգնեց , եթը Հայր մերով խաչակնքեց ու քնացրեց :



Դէգի՛ , մի երազ եմ տեսել , քնատեղից միւս առաւօտ զարթնեց Աղալօն :

— Խէր ըլի , բալո՛ւկս , ասա՛ տեսնենք ,

— Երազումս տեսայ , որ աէրաէրենց արխը վերջացրել էինք , չարխն էինք կանգնացնում , էդ ժամանակը աէրաէրն ազուա դառաւ ,

Թռաւ ու դնաց արխի բերանումը կանգնեց , կառուցով ջուր դալու ակ-  
զը քանդում էր : Ինչպէս թէ՛ էլ չարիս չի՛ , մեծ ծառ է , մինք մշակներս  
էլ ծաեր կնք ու ծառի ճղքների վրայ վերեւ ներքեւ կնք թռչնոտում :  
Յանկարծ տեսնում կնք , որ Քոի կէս ջուրը արխի միջով գոջգոջա-  
լով դալիս է , ու չարիս շինող վարպետը ջրի ափիցը ձեռները բարձր  
ու ցած անկով ուղում է մեզ թռչնել :

Բոլոր ծաերը լսեցին , թեւ առան թռան , ես չը կարողացայ ,  
ջուրը հասաւ , ծառն արմատահան արեց շուռ սուեց ու ինձ ծառի ճղք-  
ների մէջ խճճեց ու քչեց : Մէկ էլ աշխարհքը գլխիս մթնեց , էլ բան  
չը հասկացայ :

Ջարթնեցի , որ երազ էր ու ես էլ քրտնքի մէջ կորած :

Դեղած-Մաթօյի ոտ ու ձեռը դող բռնեց , նա մի քանի անկապ ու  
անհասկանալի խօսքեր ու նախադասութիւններ շաղակրատեց եւ ուշա-  
գնաց տախտի վրայ փռուեց :

Աղալօն շտապով ջուր հասցրեց ու մօրն ուշքի բերեց :

— Ի՞նչ էլաւ դէղի ջան , չար սնաթ հօ՛ չը հանդիպեց , վատ  
երազ հօ չէ՞ր տեսածս :

— Ոչի՛նչ , բալո՛ւկս , ոչի՛նչ , անց կացաւ երազիցդ մի քիչ վա-  
խեցայ , բայց ոչի՛նչ , օրը կիրակի է , երազը սուտ է , կակաղեց Դէ-  
ղա Մաթօն ու երեք անգամ որդուն խաչակնքեց :



— Ա՛չքդ լո՛յս , էս օր վերջի օրն է , դէղի ջա՛ն , չարխը կը  
կանգնացնենք , ջուրը վրէն թաց կը թողնենք ու տէրտէրին կուրա-  
խացնենք : Տէրտէրն ինձ տասց՝ չորեքշաբթի առաւօտահան արի մեր  
սուենը , գնանք Խօջի վանքը , լուսանոցու գերեզմանն օրհնեմ ու թուղ-  
թըդ քեզ տամ , երեքշաբթի վեր կացաւ քնատեղից Աղալօն եւ մօրն  
աւետիք տուեց :

Աշքի լուսով կենա՛ս , բալո՛ւկս , բայց ինձ լսի՛ր , էս օր Օրթա-  
ճալայ գնալը թող . ես հիւանդ եմ , երեխէքանցը դու գլուխ քաշիր :

— Ի՞նչ ես ասում , դէղի ջա՛ն , է՛լ տէրտէրի ձեռիցը պրծնի՞լ  
կըլի . նա էս օր հինգ մշակ էլ աւել պիտի բռնի չարխը կանգնացնելու  
համար , ես ո՞նց կարող եմ յետ ընկնիլ , օրն էգուց մեր 25 մանէթի  
բարաթը միտալոյ սուղը (հաշտարար դատաւորին) կը տանի ու ոնց որ  
գլխներին տուեց , սուենը ձեռքներինս խլեց , հիմի էլ պրիսուսը (1)  
կը բերի , վերջին փալաս-փուլուսներս չաքուճի ասկ կը գնի , կը ծախի :

— Ղո՛րդ ես , ասում , բայց ես հիւանդ եմ , պնդեց Մաթօ-դէղան :

— Հիւանդ ես , երեխէքն առ , գնա դոնքաչիս մօտ , թող էս օր  
նա մտիկ տայ , էս օրուայ իմ յետ մնալն անկարելի է , տէրտէրին  
գու լաւ ես ճանաչում :

(1) Դատարանական լծաած զործերի քրտնքող պաշտօնեայ :



— Գլխովը դիպչի բարա՛թը , թող գայ բոլորիս աղամմերկ անի , ունեցած չունեցածներս տանի աչքը կոխի , շեշտեց երբորդ անգամ Դէդա-Մաթօն :

— Մեր մեռիլ հոգին էլ սատանէքանց ճանգու՛մը ասնջու՛ւի հա՞ . էդ պէ՞ս ես սիրում բալուկիդ երեխէքանց մօրը :

Դէդա-Մաթօն էլ խօսք չսասց , հեկեկալով ձեռքով դուռը ցոյց տուեց :

Աղալօն ինքն էլ չը հասկացաւ , թէ ընչի՞ցն էր , որ կեանքի մէջ առաջի անգամը հայրական քնքշու՛թեան դործ գրեց : Կա մօտեցաւ մի կարգի քնոտած երեխաներին եւ մէկ մէկ համբուրեց : — Այսքանը չէր . նա մօտեցաւ մօրը , փարուեց նրա գրկովը , համբուրեց պառոււի թառամած ձեռքը եւ ասելով՝ քո օրհնութիւնն իմ երեխէքանց գլխից անպակաս ըլի՛ , յանկարծ գուրս ընկաւ մօր գրկից ու շտապով իրան ձգեց փողոց եւ դէպի Օրթաճալա՛յ :

Նոյն երեքշաբթի երեկոն է , մութը գետինն առել է , բայց ոչ Աղալօն է տուռ գալիս եւ ոչ Դէդա-Մաթօն է իրանց փողոցի դռնից հեռանում : Պառաւը մի քանի բոպէտով երեխաներին քուն է գրել եւ մնացել դրանք քար կարուած :

Արդէն հարեւանի տան ժամացուցի զանգակն իննը հնչեցրեց , փողոցները հանդարտուեցան , երթեւեկը դադարեց , բայց Աղալօն դեռ չըկայ :

— Ի՛նչ անեմ , Աստուած , լեզուս թող պապանձուի՛ , ու լեզուիս ծէրին հղած խօսքը բերանիցս չը դուրս գայ . մօր օրօրօցը կրակ ընկնէր , չը պողէր , որ իր պողածի համար թշնամուց աւել վատ վատ բաներ չը մտածէր . երեխէն որ մօր աչքից հեռանում է , մօր միաքն էլ հետը սանում է : Մայրն իր զաւակին մտքով կամ քարերիցն է ցած քցում , կամ ցուրտ ու շքի է դէմ անում , կամ հիւանդացնում է . մի խօսքով , չըկայ փորձանք , որ մէրը՝ շատ սիրելուց՝ իր որդուն չը հանդիպեցնի : Բաղդ , յաջողութիւն իրանից ծնածի համար ոչ մի մայր մտքովը չի անցկացնում : Մէկը ես չե՛մ , հաղար անբաղդութիւնն եր մտքիս առջեւը դիզուել են . ախար ի՛նչ անեմ , երեխէս ընչի՞ ուշացաւ . ոչ մի օր էսքան մութը չէր ընկել : Հողը գլխի՛դ , Մաթօ՛ , թէ որ բերանիցս դուրս գա՛յ , ծոցս թափուի՛ , թէ որ բալուկիս կիրակի գիշերուայ տեսած երազը կատարուի , ոնց որ երեք տարի առաջ տեսածը կատարուեց , էն օրը հարսս էր , էս օր տանս սիւնն ու հիմքն է , ամա՛ն երկնային թաղաւոր Աստուած , երեխիցս շատ եմ վախում , ինչ գալու է՝ իմ գլխին գա՛յ : Թող ես սո՛ւտ ըլիմ , թող Երազահանի խօսքը ճշմա՛րիտ լինի , ու , ոնց որ կարգացողներն ասում են , էֆէմէրտու մէջ գրածը ուղիղ դուրս գայ , որ ասում է , թէ «օրը կիրակի է , երազը սուտ է : »

Բայց , ձեզ ղուերբա՛ն , ի՞նչ անեմ , գլուխս ո՞ր յարովը տամ , երեխէս չեկաւ , էս կէս գիշերին ես ում դուռը գնամ , լալիս մղկտում էր խեղճ պառաւը :

— Գանդուկ՛ ու յարաապուկի՛ դեւ-կիրակոսի առնը , ի՞նչ պիտի անես , ջրատար պտռա՛ւ , օրդ խաւարել է , Աստուած զլխիդ խըռով է կացել , թագաւորի պէս փեւէս անիծած իրիցի շարխի տակովն է եղել , Գոռուքը խեղդուե՛լ . մարմինը Սողանլուխի մօտերգն են գետիցը հանել , պոճոկուած տէրաէրբ քեզ իմաց չէր տուել , մարդ էր զրկել ինձ կանչել :

Բօթատուն Դալալ Մինասն էր— Աղալօյի աները , որ հակառակ իւր ցանկութեան՝ չը կարաց թագցնել ինամուլը նրա բալուկի եւ իր փեսայի կորուստը :

— Ա՛խ . . .

Միայն մի ճիչ , եւ Դեղա-Մաթօն տարածուեց իւճայասակ փողոցում եւ անչնչացաւ :

Աղալօյի երկու որբերը այս անգամ զրկուեցին հօրից եւ հօրատաւից : Մօրապապն ու մօրտատան են նրանց տէր ու տիրեկանները :

Հիմի ձեզ եմ հարցնում , իրաւունք չունէ՞ր ողորմած հոգի Դէղա-Մաթօն պնդելով , թէ էֆէմէրարն սխալուում է՝ ասելով , թէ «օրը կիրակի է , երազը սուտ է» :

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

USUՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) ԷՄ. քհ. ՆԱԶԱՐԵԱՆՑ , Ոտանաւորներ (երեխաների համար) . 15 պատկերով , Մոսկուա 1903 . գինն է՝ 50 կ .

2) Լ. ՄՍԵՐԵԱՆՑ , Ուրարտեան տարրը հայերէնի մէջ . (ասերէն) , Մոսկուա 1902 .

3) Ս. ՀԱՅԿՈՒՆԻ , Ժողովրդական հէքաթ . (էմինեան Աղգագր. Ժող. հտ. Գ) , Մոսկ. -Վլադի. 1902 , Գինն է՝ 1 ր. 20 կ .

4) ՇԱՀՐԻԱՐ , Ջհուղ-Քուչան . վէպ Պարսկաստանի կեանքից , Թիֆլ . 1902 , Գինն է՝ 1 ր .

5) ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ , Մուսս . պատմական պօղմ (1722—1724) , Նւագ Ա . Թիֆլ . 1902 , Գինն է՝ 20 կ .

6) — , Եռագներ , Թիֆլ . 1902 , Գինն է՝ 30 կ .

7) J Clédat, Recherches sur le Kôm de Baouit. Paris 1902.

8) F. C. Conybeare, The survival of animal sacrifices inside the Christian Church. London 1902 ?

9) Գ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ հրատարակած է 9 նամակաքարտեր , հայ գործիչներու պատկերներով : 9 հատին գինն է՝ 1 ֆր . : Դիմել Հեղինակին , ի Ռուսչուք : digitised by A.R.A.R.®